

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԿՈՆԴԱԿ

Շրջաբերական

ՄԱՏԹԷՈՍ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ . . .

Գերաշնորհ Առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի . . . հարազատի Մայր Աթոռոյս Նուիրեմք ողջոյն հանդերձ Հայրապետական օրհնութեամբ։

Գերաշնորհութիւն Ձեր հեռագրաւ ի 23-ին մարտի տարւոյս յայտնեալ էր, եթէ ի Կուրուտերէ գեղջ շրջանին Սուխումի ոմանք ի սատահակաց յանդգնեալ են յեկեղեցւոջ հայոց տալ ներկայացումն. ի նմին իսկ աւուր տուաք հրաման գերաշնորհութեան Ձերում՝ շրջաբերական կարգադրութեամբ խստիւ արգելուլ զկրկնումն այդօրինակ դատապարտելի երևոյթից։ Այնուհետև ընկալաք զգրութիւն Ձեր, յորում յայտ առնէիք, եթէ արկեալ էք ի ձեռն մարմնաւոր դատարանի զյանցաւորս ընդ պատասխանատուութեամբ։

Բաց յայտնէ՝ հասանին առ Մեզ տրտունջք և բողոք, եթէ ի մէջ ժողովրդեան մերոյ ի տեղիս տեղիս գտանին անկիրթ և անդաստիարակ անձինք, որք ոչ ըմբռնելով զվեհութիւն և զնշանակութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ կամ ոչ կամելով յարգել զկրօնական զգացմունս հաւատացելոց, թոյլ տան ինքեանց զանվայելուչ և զոգեղ վերաբերմունս ի մէջ եկեղեցեաց մերոց, յատկապէս ի գիշերի աւագ հինգշաբաթւոյ (գիշեր խաւարման) և յայլ հանդիսաւոր և ի տօնական աւուրս, որպէս և ի ժամ ս. հաղորդութեան՝ խօսակցին ընդ միմեանս առանց պատկառելոյ, բարձրաձայնեն զանպատշաճ աղմուկս և առնեն զանկարգութիւնս՝ անպատուաբերս վասն ժողովրդեան և եկեղեցւոյ մերոյ, որ և լինի պատճառ գայթակղութեան և արդար բարկութեան ջերմեռանդ և գիտակից ժողովրդեան։ Անշուշտ սոյն օրինակ եպերելի վարմունք են արդիւնք անկրթութեան, զուրկ գոլոյն յընտանեկան դաստիարակութենէ և ի քրիստոնէական քաղաքավարութենէ։ Սակայն յայսոսիկ դէպս ոչ միայն յանցաւոր և պատասխանատու են գործողք անկարգութեանց, այլ և այնոքիկ, որք կարգեալ կան ի հոգևոր իշխանութենէ՝ գործակալք, աւագ երէցք, քահանայք և ընտրեալք ի ժողովրդոց՝ ծխական հոգաբարձութիւնք և երեսփոխանք, որոց ամենեցուն բարոյական և կրօնական պարտիք են լինել նախանձախնդիր վասն վայելուչ կարգապահութեան և կանոնաւորութեան, զոր պարտի ունել անձնիւր քրիստոնեայ և առհասարակ ամենայն բարեկիրթ ծխական յեկեղեցւոջ, մանաւանդ հոգևորականք։

Արդ, ի նկատ առեալ զայս ամենայն այսու Հայրապետական Կոնդակաւ մերով առաջադրեմք Գերաշնորհութեան Ձերում տնօրինել ի ձեռս փոխանորդաց և գործակալաց թեմիդ յուշ առնել ամենայն քահանայից, ծխական Հոգաբարձութեանց և երեսփոխանաց, զի մի երբէք կըրկնեսցին միանգամայն դատապարտելի և աններելի դէպք թատերական ներկայացման, որ յեկեղեցւոջ Կուրուտերէ աւանի։ Ցամենայն ժամ զգաստ և նախանձախնդիր լինել

առ կարգադրութիւնս և կարգապահութիւնս ի մէջ Տանն Աստուծոյ և յորդոր կարդալ յունկս բարեպաշտոն ժողովրդեան առ ի կոչել յուղղութիւն և ի կարգապահութիւն զանկարգս յեկեղեցիս մեր։ Իսկ ի հանդիսաւոր և ի տօնական աւուրս, յորժամ խառնեալ լինի բազմութիւն մեծ՝ արանց, կանանց, երիտասարդաց և մանկանց՝ նախապէս տալ ընտրել ի ժողովրդոց վերահսկողս՝ անձինս բարեմիտս և բարեբարիշտս վասն պահպանելոյ զօրինաւոր կարգապահութիւն և զվայելչութիւն յեկեղեցիս մեր ի յորդանս կրօնական վեհ զգացմանց և արժանպատուութեան տառապեալ Աստուծոյ սիրելւոյ։

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի մէնջ։ Ամէն։

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՏԹԷՈՍ Բ.

ի 4 մայիսի 1910 ամի.
Թ. 1198

Հայրապետական կարգադրութիւններ.

Կոնդակ Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով տրուեցան զանազան հրահանգներ վանքերի ընդհանուր կալուածների և Մայր Աթոռի գիւղերի մասին։ 12 ապրիլի Թ. 929.

— Նոյն Սինոդի անունով, որով Սինոդի անդամ Տ. Մատթէոս վարդապետը Ռուսաստանի թեմերի և պաշտօնատար անձանց հաշիւների վերաքննիչ կարգուեց։ 12 ապրիլի Թ. 930.

— Նոյն Սինոդի անունով, որով ուղարկուեց դործադրելու և տպագրելու այս տարուայ Մայր Աթոռի և թեմերի նախահաշիւը։ 12 ապրիլի Թ. 939.

— Նոյն Սինոդի անդամ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի անունով, որով պատուիրուեց գնալ Շուշի քննելու Էջմիածնապատկան կալուածների խնդիրը և Կոնսիստորիայի

անդամների հոգևոր իշխանութեան հրամանները չկատարելու հանգամանքը։ 20 ապրիլի թ. 935.

— Երևանի թեմի բոլոր ծխ. հոգաբարձութիւնների անունով, որով հաստատուեցան թեմում եղած 147 եկեղեցական—ծխական դպրոցները։ 22 ապրիլի թ. 973—1119.

— Մատրասեցի պ. Սաղաթել Ճաղրայեանի անունով, որով կարգուեց Էջմիածնի գանձանակադրամների գանձապետ։ 24 ապրիլի թ. 1123.

— Դարբանդ քաղաքացի պ. Միրզայ Մկրտչեան Պօղոսեանի անունով նոյն իմաստով։ 24 ապրիլի. թ. 1124։

— Բագուեցի՝ պ. պ. Սիմէօն Սանամեանի և Մինաս Կաճկաճեանի անունով նոյն իմաստով։ 24 ապրիլի. թ. 1125 և 1126.

— Ղուբայ քաղաքացի պ. Հայրապետ Մելիք-Դաւայեանի անունով նոյն իմաստով։ 24. ապրիլի. թ. 1127։

— Շամախեցի պ. Մահսուրի Շախարեանի անունով նոյն իմաստով։ 24 ապրիլի. թ. 1128։

— Նուխեցի պ. պ. Գրիգոր Գրիգորեանի և Բաղդասար Հայրարձումեանի անունով, որով կարգուեցան Էջմիածնի գանձանակադրամների գանձապետ։ 24 ապրիլի. թ. 1129 և 1130.

— Շուշեցի պ. պ. Եփրեմ Այդինեանի, Արշակ Մանկասարեանի, Միքայէլ Եղիազարեանի և Յովհաննէս Դաւթեանի անունով նոյն իմաստով։ 24 ապրիլի. թ. 1131—1134.

— Վրաստանի թեմի Առաջնորդի անունով, որով պատուիրուեց ամեն կերպ նպաստել Ներսիսեան Հոգևոր Դպրանոցին պատկանեալ Փիրոյեանցի խարխուլ շինութեան փոխարէն կառուցանելու նոր շէնք հոգաբարձու-

թեան որոշման և ծրագրի համաձայն։ 26 ապրիլի։ թ. 1166։

— Ս. Էջմիածնի Սինոդի անդամ Տ. Մատթէոս վարդապետի անունով, որով վերաքննիչ կարգուեց հոգևոր հատատաութիւնների և պաշտօնատար անձանց դրամական հաշիւները զննելու համար։ 30 ապրիլի։ թ. 1182.

— Նուխուոյ փոխանորդ Եղիշէ վարդապետ Ա.հարոնեանի անունով, որով կարգուեց ժամանակաւորապէս Ղարաբաղի կոնսիստորիայի նախագահ։ 2 մայիսի։ թ. 1190.

Հայրապետական օրհնութիւն եւ զոհունակութիւն:

Կոնդակ շնորհաւորութեան և օրհնութեան բանաստեղծ Ալէքսանդր Մատուրեանի անունով նորա 25-ամեայ գրական գործունէութեան յոբելեանի կատարման առթիւ։ 22 ապրիլի։ թ. 971.

— Օրհնութեան և գոհունակութեան Եկատերինոդարցի Տիկ. Տիրուհի Քառասուլեանի անունով իւր արած կտակով Տաճկահայաստանում մի դպրոց բանալու առթիւ։ 26 ապրիլի։ թ. 1167.

— Օրհնութեան և գոհունակութեան Տփխիսի Ազգագրական Ընկերութեան անունով նրա գործունէութեան յառաջադիմութեան և բարգաւաճման առթիւ։ 27 ապրիլի։ թ. 1168.

— Օրհնութեան Վարագայ վանքի հոգաբարձութեան անունով նոյն վանքի դպրոցի 50-ամեայ յոբելեանի կատարման առթիւ։ 30 ապրիլի։ թ. 1186.

Օրհնութեան և գոհունակութեան Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան անունով՝ Նորին Սրբութեան Ընկերութեան պատուաւոր անդամ ընտրելու մասին։ 2 մայիսի։ թ. 1192.